

**ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ՀՀ ԱԺ ՄԱԾՁԲ-18/21**

ք. Երևան

«15» 03 2018թ.

ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմը, ի դեմս աշխատակազմի ղեկավար-գլխավոր քարտուղար Արա Սաղաթեյանի, որը գործում է աշխատակազմի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Եուրոմոթորս» ՓԲԸ-ն, ի դեմս ընկերության տնօրեն Ջաբեր Ալմարզուբի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է ավտոմեքենայի վերանորոգման ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը:

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատուց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը:

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը:

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1) և հանձնման-ընդունման արձանագրության 2 օրինակ (հավելված N 3):

3.2 Հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվում է, եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրությունը չի ստորագրվում և Պատվիրատուն՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.3 Պատվիրատուն հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 5 աշխատանքային օրվա ընթացքում Կատարողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ ծառայությունը չընդունելու պատճառաբանված մերժումը:

3.4 Եթե պայմանագրի 3.3 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.3 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն Կատարողին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1 Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության առավելագույն գինը կազմում 1000000 (մեկ միլիոն) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է փաստացի մատուցված ծառայության՝ հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա, պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (գրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

7.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.11 Սույն պայմանագիրը կազմված է 19 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.12 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Պ Ա Տ Վ Ի Ր Ա Տ ՈՒ

ՀՀ Աժ աշխատակազմ
ք. Երևան, Մ. Բաղրամյան պող. 19
ՀՎՀՀ 00008519
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900011020089
ՀՀ Աժ աշխատակազմի ղեկավար -
գլխավոր քարտուղար
Արա Ստոյանյան



Կ Ա Տ Ա Ր Ո Ղ

«Եւրոմոնոթորս» ՓԲԸ
ք. Երևան, Գր. Լուսավորիչ 7
«Հայէկոնոմբանկ» ԲԲԸ
Հ/Հ 163288054279
ՀՎՀՀ 02628089
Տնօրեն՝
Ջաբեր Ալմարգուքիի



ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՅՈՒՅՑ

ՀՀ դրամ

		Ծառայության						
Իրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	տեխնիկական բնութագիրը	ընդհանուր միավորը	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	մատուցման		
						հասցեն	ժամկետը	
1	501111130/1	Ավտոմեքենաների ընթացիկ տեխնիկական սպասարկման և վերանորոգման ծառայություններ, այդ թվում 1 ավտոմեքենա/BMW 7-series/: Առավել մանրամասն նկարագրերը ներկայացված են կից 1.1 հավելվածում	դրամ	1000000	1	բ. Երևան, Գր. Լուսավորիչ 7	25.12.2018թ.	

Պ Ա Տ Վ Ի Ր Ա Տ ՈՒ

ՀՀ ԱԺ աշխատակազմ
 ք. Երևան, Մ. Բաղրամյան պող. 19
 ՀՎՀՀ 00008519
 ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
 Հ/Հ 900011020089
 ՀՀ ԱԺ աշխատակազմի ղեկավար -
 գլխավոր քարտուղար
 Արա Սադրաբեյլյան


 (ստորագրություն)
 Կ.Տ.



Կ Ա Տ Ա Ր Ո Ղ

«Եուրոմոթորս» ՓԲԸ
 ք. Երևան, Գր. Լուսավորիչ 7
 «Հայէկոնոմբանկ» ԲԲԸ
 Հ/Հ 163288054279
 ՀՎՀՀ 02628089
 Տնօրեն՝
 Զաբեր Ալմարզուբիի


 (ստորագրություն)
 Կ.Տ.



Ձեռքբերվող ծառայության նկարագիր		
NN	SU-1, SU-2 ծառայությունների և SU-2 ընթացքում օգտագործվող պահեստամասերի քայլուղերի և այլ օժանդակ նյութերի անվանումները	Տրանպորտային միջոցների մակնիշները/տեսակները/ըստ չափաբաժինների
		5-տեղանոց մալքատար հետևի տանող ա/մ
1	2	3
	SU-1 ներառվող ծառայությունների անվանումը	Այլ պետությունների արտադրության ա/մ
1	Բռնկման համակարգի ստուգում	10500
2	Սառեցման համակարգի ստուգում	9000
3	Յուղման համակարգի ստուգում	19500
4	Արտացման համակարգի ստուգում	9000
5	Կցորդման համակարգի ստուգում	-
6	ՓՏ-ի աշխատանքի ստուգում	-
7	ԱՓՏ-ի աշխատանքի ստուգում	18000
8	Կարդանային փոխանցման աշխատանքի ստուգում	9000
9	Բաշխիչ տուփի աշխատանքի ստուգում	9000
10	Առջևի և հետևի կամրջակների աշխատանքի ստուգում	12000
11	Առջևի և հետևի կախոցների աշխատանքի ստուգում	12000
12	Արգելակային համակարգի աշխատանքի ստուգում	12000
13	ABS համակարգի ստուգում	12000
14	Էլեկտրական համակարգի աշխատանքի ստուգում	12000
15	Ղեկավարման համակարգի աշխատանքի ստուգում	12000
16	Թափքի վիճակի ստուգում	12000
17	Տարբեր ազդեցատների յուղերի որակի և մակարդակների ստուգում	10500
SU-1 ներառվող ծառայությունների անվանումը		
18	Շարժիչի հանում տեղադրում	243000
19	Նույնը DOHC (2 բաշխիչ լիսեռ) դեպքում	-
20	Նույնը կոնդիցիոների դեպքում	-
21	Նույնը ԱՓՏ-ի դեպքում	-
22	Շարժիչի վերականգնում	-
23	Նույնը DOHC դեպքում	-
24	Նույնը V6-ի դեպքում	-
25	Շարժիչի բարձիկի հանում և տեղադրում	82500
26	Բ/լիսեռի կափարիչի հանում և տեղադրում (աջ և ձախ)	168000
27	Նույնը աջի համար (V6)	-
28	Նույնը ձախի համար (V6)	-
29	Շարժիչի բրկի գլխիկի հանում և տեղադրում	349500
30	Նույնը աջի համար (V6)	-
31	Նույնը ձախի համար (V6)	-
32	Շարժիչի գլխիկի միջադիրների փոխարինում	349500

33	Շարժիչի գլխիկի վերանորոգում	-
34	Փականի խցուկի փոխարինում	-
35	Նույնը V6-ի դեպքում	-
36	Բաշխիչ լիսեռի հանում և տեղադրում	256500
37	Նույնը V6-ի ձախի դեպքում	-
38	Նույնը V6-ի աջի դեպքում	-
39	Նույնը DOHC դեպքում	-
40	Բաշխիչ լիսեռի խցուկի փոխարինում	-
41	Հրիչների փոխարինում SOHC	-
42	Նույնը DOHC դեպքում	-
43	Ատամնավոր փոկի փոխարինում	-
44	Նույնը DOHC դեպքում	-
45	Նույնը V6-ի դեպքում	-
46	Ծնկաձև լիսեռի առջևի խցուկի փոխարինում	-
47	Նույնը կոնդիցիոների դեպքում	-
48	Նույնը DOHC դեպքում	-
49	Նույնը կոնդիցիոների դեպքում	-
50	Նույնը V6-ի դեպքում	-
51	Նույնը կոնդիցիոների դեպքում	-
52	Ծնկաձև լիսեռի հետևի խցուկի փոխարինում	-
53	Նույնը ԱՓՏ-ի դեպքում	-
54	Մխոցային օղակների փոխարինում	-
55	Նույնը DOHC դեպքում	-
56	Նույնը V6-ի դեպքում	-
57	Թափանիվի հանում և տեղադրում	-
2 Ղեկավարման, սնման և յուղման համակարգ		
58	Ցուղի և յուղի զտիչի փոխարինում	3000
59	Ցուղի պոմպի փոխարինում	37500
60	Նույնը DOHC դեպքում	-
61	Նույնը V6-ի դեպքում	-
62	Ղեկավարման բլոկի վերանորոգում	-
63	Բռնկման կարգավորում	-
64	CO կարգավորում	-
65	Խարնարակի հանում և տեղադրում	-
66	Խարնարակի վերանորոգում	-
67	Օդի զտիչի փոխարինում	10500
68	Ինժեկտորի ֆորսունկաների փոխարինում (8 հատ)	109500
69	Ինժեկտորի ֆորսունկաների մաքրում	-
70	Բենզամոլիչի փոխարինում	10500
71	Վառելիքի զտիչի փոխարինում	12000
72	Վառելիքի բաքի հանում և տեղադրում	52500
73	Տրամյորի հանում և տեղադրում	-
74	Տրամյորի վերանորոգում	-
3. Սառեցման և արտաձման համակարգ		
75	Հովհարի փոկի հանում և տեղադրում	-
76	Հովհարի հանում և տեղադրում	-
77	Ռադիատորի հանում և տեղադրում	34500

78	Նույնը կոնդիցիոների դեպքում	-
79	Նույնը ԱՓՏ-ի դեպքում	-
80	Ռադիատորի վերանորոգում	-
81	Թերմոստատի փոխարինում	36000
82	Ջրի պոմպի փոխարինում	36000
83	Նույնը DOHC և V-6 դեպքում	-
84	Նույնը կոնդիցիոների դեպքում	-
85	Ջրի պոմպի վերանորոգում	-
86	Նույնը DOHC դեպքում	-
87	Նույնը կոնդիցիոների դեպքում	-
88	Ընդարձակող բաքի փոխարինում	7500
89	Խլարարի հանում և տեղադրում	-
90	Նույնը DOHC դեպքում	-
91	Ռադիատորի փողրակի հանում և տեղադրում	-
4. Կցորդում, ՓՏ և ԱՓՏ		
92	Բանվ.կամ գլխ.գլանի հանում և տեղադրում	-
93	Բանվ.կամ գլխ.գլանի վերանորոգում	-
94	Կցորդման սկավառակների և առանցքակալի փոխարինում	-
95	Կցորդման ոտնակի հանում և տեղադրում	-
96	Կցորդման ճուպանի հանում և տեղադրում	-
97	ՓՏ-ի հանում և տեղադրում	-
98	ՓՏ-ի վերանորոգում	-
99	ՓՏ-ի առանցքակալի փոխարինում	-
100	ՓՏ-ի պատյանի հանում և տեղադրում	-
101	Վազքաչափի շարժաբեր փոխարինում	-
102	ԱՓՏ-ի կոնվերտերի հանում և տեղադրում	-
103	ԱՓՏ-ի տանող սկավառակի փոխարինում	-
104	Նույնը V6-ի համար	-
105	ԱՓՏ-ի հանում և տեղադրում	106500
106	Նույնը V6-ի համար	-
107	ԱՓՏ-ի վերանորոգում	-
108	Նույնը V6-ի համար	-
109	ԱՓՏ-ի յուղի զտիչի փոխարինում	28500
5.Բաշխիչ տուփ, կարդանային լիսեռ		
110	Բաշխիչ տուփի հանում և տեղադրում	52500
111	Բաշխիչ տուփի հանում և տեղադրում վերանորոգումով	-
112	Բաշխիչ տուփի խցուկի փոխարինում	54000
113	Կարդանային լիսեռի հանում և տեղադրում	31500
114	Կարդանային լիսեռի հանում և տեղադրում, վերանորոգումով	-
115	Կարդանային լիսեռի խաչուկի հանում և տեղադրում	-
116	Կարդանային լիսեռի միջանկյալ կախոցի հանում և տեղադրում	34500
6.Առջևի և հետևի կամրջակներ		
117	Առջևի կամ հետևի կամրջակի հանում և տեղադրում	99000
118	Առջևի կամ հետևի կամրջակի լիակատար քանդում և հավաքում	-
119	Առջևի կամ հետևի կամրջակի մասնակի քանդում և հավաքում	-

120	Առջևի կամ հետևի կամրջակի կիսաստնու հանում և տեղադրում	-
121	Կիսաստնու առանցքակալի փոխարինում	-
7. Կախոց		
122	Առջևի կախոցի լիակատար քանդում և հավաքում	-
123	Տրավերսի հանում և տեղադրում	99000
124	Չախ կամ աջ հողակապի հանում և տեղադրում	-
125	Անվակունդի առանցքակալի փոխարինում	-
126	Նույնը հետին տանող ա/մ-երի համար	-
127	Հետևի անվակունդի առանցքակալի փոխարինում	-
128	Նույնը հետին տանող ա/մ-երի համար	-
129	Ձախ կամ աջ հողակապի խցուկների փոխարինում	-
130	Ձախ կամ աջ հողակապի առանցքակալների փոխարինում	-
131	Ցնցամեղմիչի թասակի փոխարինում	-
132	Ջսպանակի հանում և տեղադրում	31500
133	Ջսպակի հանում և տեղադրում	-
134	Ջսպակի վռանների փոխարինում	-
135	Առջևի ցնցամեղմիչի հանում և տեղադրում	28500
136	Ներքևի լծակի վռանների տեղադրում	-
137	Ներքևի լծակի վռանների փոխարինում	22500
138	Առջևի աջ կամ ձախ ձգանքի հանում և տեղադրում	13500
139	Միջին ձգանքի հանում և տեղադրում	-
140	Ճոճանակային լծակի հանում և տեղադրում	-
141	Վերևի լծակի հանում և տեղադրում	15000
142	Վերևի լծակի վռանների փոխարինում	15000
143	Գնդե հողակապերի փոխարինում	-
144	Ծայրականների հանում և տեղադրում	-
145	Առջևի կայունարարի հանում և տեղադրում	22500
146	Առջևի կայունարարի վռանների փոխարինում	-
147	Առջևի կայունարարի առջևի վռանների փոխարինում	-
148	Հետևի զսպանակի փոխարինում	-
149	Հետևի ցնցամեղմիչի հանում և տեղադրում	34500
150	Հետևի ձգածողի հանում և տեղադրում	6000
151	Հետևի երկաթածողի հանում և տեղադրում	-
152	Կայունարարի կանգնակների հանում և տեղադրում	7500
153	Հետևի անկյունագծային լծակի հանում և տեղադրում	7500
154	Անկյունագծային լծակի վռանների փոխարինում	-
155	Անվաբացքի կարգավորում	30000
156	Ջողման աշխատանքներ 1 քառ.սմ համար	-
8. Ղեկային մեխանիզմ		
157	Ղեկային կալունի հանում և տեղադրում	93000
158	Նույնը V6-ի համար	-
159	Ղեկային կալունի վերանորոգում	-
160	ՂԿ-ի առանցքակալի և/կամ վռանների փոխարինում	-
161	ՂԿ-ի հողակապերի հանում և տեղադրում	-
162	Հիդրոուժեղարարի պոմպի հանում և տեղադրում	126000

163	Նույնը DOHC դեպքում	-
164	Հիդրոուժեղարարի փոկի հանում և տեղադրում	-
165	Նույնը DOHC դեպքում	-
166	Հիդրոուժեղարարի փոխարակի հանում և տեղադրում	-
167	Նույնը DOHC դեպքում	-
168	Նույն կողիցիոնների դեպքում	-
169	ՀՈՒ ՂԿ-ի հանում և տեղադրում	-
170	ՀՈՒ ՂԿ-ի վերանորոգում	-
9. Արգելակային համակարգ		
171	Գլխ. գլանի հանում և տեղադրում	15000
172	Գլխ. գլանի վերանորոգում	-
173	Վակումային ուժեղարարի հանում և տեղադրում	15000
174	Բանվ. գլանի հանում և տեղադրում	-
175	Բանվ. գլանի վերանորոգում	-
176	Արգելակային համակարգի օդահանում	21000
177	Առջևի սուպպորտի հանում և տեղադրում	12000
178	Հետևի սուպպորտի հանում և տեղադրում	9000
179	Առջևի սուպպորտի վերանորոգում	-
180	Հետևի սուպպորտի վերանորոգում	-
181	Արգելակային փոխարակի փոխարինում	-
182	Առջևի արգելակային կոճղակների փոխարինում	13500
183	Հետևի սկավառակային կոճղակների փոխարինում	-
184	Հետևի կոճղակների փոխարինում	13500
185	Առջևի արգելակային սկավառակի փոխարինում	18000
186	Հետևի արգելակային սկավառակի փոխարինում	24000
187	Արգելակային սեղմակի հանում և տեղադրում	-
188	ABS-ի հանում և տեղադրում	43500
189	ABS-ի վերանորոգում	-
190	Ձեռքի արգելակի ճոպանի հանում և տեղադրում	-
191	Ձեռքի արգելակի մեխանիզմի վերանորոգում	-
10. Էլեկտրասարքավորում		
192	Էլեկտրասարքավորման վերանորոգում	-
193	Չափիչ սարքերի հանում և տեղադրում	6000
194	Գեներատորի հանում և տեղադրում	46500
195	Նույնը V6-ի դեպքում	-
196	Նույնը հիդրոուժեղարարի դեպքում	-
197	Գեներատորի վերանորոգում	-
198	Մեկնարկիչի հանում և տեղադրում	43500
199	Մեկնարկիչի վերանորոգում	-
200	Առջևի լապտերի հանում և տեղադրում	28500
201	Հետևի լապտերի հանում և տեղադրում	13500
202	Բռնկման կողպեքի հանում և տեղադրում	-
203	Վազքաչափի հանում և տեղադրում	-
204	Վազքաչափի ճոպանի հանում և տեղադրում	-

205	Սարքերի պանելի հանում և տեղադրում	6000
206	Արագաչափի հանում և տեղադրում	-
207	Ազդանշանի հանում և տեղադրում	-
208	Ապակեվազիչի շարժիչի հանում և տեղադրում	15000
209	Դռների կենտրոնական փականի հանում և տեղադրում	-
210	Ազդանշանային համակարգի տեղադրում	-
211	Մագնիստոլային տեղադրում	-
212	Վառոցքային լարերի հանում և տեղադրում	-
213	Էլ/հաղորդալարերի մասնակի վերանորոգում	-
214	Էլ/հաղորդալարերի հիմնական խտրցի հանում և տեղադրում	-
215	Էլ/հաղորդալարերի երկրորդային խտրցի հանում և տեղադրում	-
216	Էլեկտրական տվիչների փոխարինում	-
217	Էլեկտրական անջատիչների փոխարինում	-
218	Վառոցքի մոմերի փոխարինում	18000
219	Կոնդիցիոների լիցքավորում	18000
220	Կոնդիցիոների վերանորոգում	-
	11. Այլ ծառայություններ	
221	Ավտոմեքենայի թափքի հղկում և ներկում, գին 1 քառ.դմ-ի համար	-
222	Ավտոմեքենայի լիցքավորում	-
223	Անիվի հանում և տեղադրում	9000
224	Անվաղեղի վերանորոգում	-
225	Անիվի բալանսավորում	7500
226	Անիվի վալց	-
227	CO-զոդման աշխատանքներ, գին 1 քառ.սմ-ի համար	-
228	Խառատային աշխատանքներ, գին 1ժ համար	-
229	Փականագործի աշխատանքներ, գին 1ժ համար	-
230	Քարշակի ծառայություն գին 1կմ, համար	
	SU-2 ընթացքում օգտագործվող պահեստամասերի քսայուղերի և այլ օժանդակ նյութերի անվանումները	
	1. Շարժիչ	
1	Շարժիչի բլոկ	2886500
2	Շարժիչի գլխիկ	2032550
3	Բարձիկ	55310
4	Շարժիչի գլխակի միջադիր	55520
5	Շարժիչի վերանորոգման կոմպլեկտ	340550
6	Շարժիչի բաշխիչ լիսեռ	438310
7	Շարժիչի փական դուրս մղող	21330
8	Շարժիչի փական ներս մղող	19120
9	Շարժիչի փականի խցուկ	29020
10	Ծնկաձև լիսեռ	1360590
11	Ծնկաձև լիսեռի խցուկ առջևի	13910
12	Ծնկաձև լիսեռի խցուկ հետև	43840
13	Ծնկաձև լիսեռի արմատական ներդիրներ	226560
14	Ծնկաձև լիսեռի շարժաթևային ներդիրներ	124560
15	Հենակային տափողակ	33890

16	Մխոց	151410
17	Մխոցային օղակներ	55060
18	Ատամնանիվ	-
19	Ատամնավոր փոխ	-
20	Շղթա	58310
21	Հիրոձգան	40790
22	Հրիչ	-
23	Հրիդրոիրիչ	-
24	Բամշակ	17530
25	Հանգստարար	-
26	Թափանիվ	292350
27	Թափանիվի պսակ	-
28	Խցուկ բաշխիչ լիսեռի	-
29	Շկիվ	34030
30	Շարժաթև	-
31	Կարտերի միջադիր	8250
32	Միջադիր	-
2. Ղեկավարման, սնման և յուղման համակարգ		
33	Յուղ շարժիչի հանքային, 1լիտր	-
34	Յուղ շարժիչի կիսասինթետիկ, 1լիտր	-
35	Յուղ շարժիչի սինթետիկ, 1լիտր	12000
36	Յուղի գտիչ	10120
37	Յուղի պոմպ	217940
38	Յուղի պոմպի շարժաբեր	-
39	Յուղի ուղիատոր	212640
40	Յուղի փողրակ	-
41	Յուղի ծորակ	-
42	Վառոցքի մոմ	11070
43	Բենզոլաք	518860
44	Խառնարակ	-
45	Խառնարակի վերանորոգման հավաքածու	-
46	Ինժեկտորի ֆորսունկա	150020
47	Վառելանյութի մղիչ էլեկտրական	563340
48	Վառելանյութի մղիչ մեխանիկական	-
49	Վառելանյութի գտիչ	-
50	Վառելանյութի գտիչի նուրբ մաքրման	-
51	Վառելանյութի փողրակ	-
52	Աքսելերատորի ճուպան	-
53	Օդի գտիչ	13830
54	Ջերմաստիճանային տվիչ	18250
55	Յուղի տվիչ	94180
56	Բաշխիչ լիսեռի տվիչ	-
57	Օդի ծախսի տվիչ	168830
58	Արագաչափի տվիչ	-
59	Հովհարի տվիչ	-
60	Ջրի տվիչ	7270
61	Բենզոլաքի տվիչ	62700

62	Մարման ընթացքի տվիչ	-
63	Մարման ընթացքի տվիչ	-
64	Ղեկավարման համակարգիչ	845080
65	Պարապ ընթացքի տվիչ	-
66	Դրոսելային փականի տվիչ	-
67	Թթվածնի տվիչ	141900
3. Սառեցման և արտաձման համակարգ		
68	Հովհարի փոկ	-
69	Հովհար	496390
70	Ռադիատոր	293850
71	Ընդարձակող բաք	57670
72	Ռադիատորի փողրակ	-
73	Թերմոստատ	43090
74	Ջրի պոմպի թևակ	-
75	Ջրի պոմպի առանցքակալ	-
76	Ջրի պոմպի թևակ	-
77	Սառեցման հեղուկ 1 լիտր	7000
78	Ջրի պոմպի տնանիվ	-
79	Հոլովակ	-
80	Փոկ	23550
81	Փոկ կոնդիցիոների	11780
82	Ծորակ	-
83	Խլարարի ներդիր	-
84	Խլարարի կախոց	10250
85	Կրոնշտեյն	-
86	Անուր (Խամուս)	-
87	Խլարար	-
88	Ռեդոնատոր	-
89	Վառարանի ռադիատոր	-
4. Կցորդում, ՓՏ և ԱՓՏ		
90	Կցորդման բանվորական գլան	-
91	Կցորդման գլխավոր գլան	-
92	Կցորդման գլանի վերանորոգման հավաքածու	-
93	Կցորդման տանող սկավառակ	-
94	Կցորդման տարվող սկավառակ	-
95	Կցորդման առանցքակալ	-
96	Կցորդման փողրակ	-
97	Փոխանցման տուփ	-
98	ՓՏ-ի առջևի խցուկ	-
99	ՓՏ-ի հետևի խցուկ	-
100	ՓՏ-ի առանցքակալ	-
101	ՓՏ-ի առաջնային լիսեռ	-
102	ՓՏ-ի միջանկյալ լիսեռ	-
103	ՓՏ-ի եղանիկ	-
104	ՓՏ-ի ատամնանիվ	-
105	Համաժամիչ	-
106	Մուֆտ	-

107	ՓՏ-ի վերանորոգման կոմպլեկտ	-
108	ԱՓՏ-ի զտիչ	138960
109	ԱՓՏ-ի սկավառակների հավաքածու	-
110	ԱՓՏ-ի վերանորոգման կոմպլեկտ	-
111	Տրանսմիսսիոն յուղ, 1 լիտր	24000
112	ԱՓՏ յուղ, 1 լիտր	15500
113	ՓՏ-ի առաջնային լիսեռ	-
114	Հերմետիկ	-
5. Բաշխիչ տուփ, կարդանային լիսեռ		
115	Բաշխիչ տուփ	2098870
116	Բաշխիչ տուփի խցուկ	-
117	Բաշխիչ տուփի առանցքակալ	-
118	Բաշխիչ տուփի ատամնանիվ	-
119	Բաշխիչ տուփի լիսեռ	-
120	Կարդանային լիսեռ	598790
121	Էլաստիկ մուֆտ	76470
122	Կարդանային լիսեռի միջանկյալ հենակ	49700
123	Կարդանային լիսեռի խաչուկի	-
6. Առջևի կամ հետևի կամրջակներ		
124	հետևի կամ առջևի կամրջակ	-
125	Ռեդուկտոր	2098870
126	Գլխավոր փոխանցման ատամնանիվների կոմպլեկտ	-
127	Դիֆֆերենցիալ	-
128	Դիֆֆերենցիալի սատելլիտ	-
129	Տանող ատամնանիվի խցուկ	-
130	Տանող ատամնանիվի առանցքակալ	-
131	Դիֆֆերենցիալի առանցքակալ	-
132	Կիսատնի	-
133	Կիսատնու առանցքակալ	-
134	Կիսատնու միջադիր	-
135	Կիսատնու խցուկ	-
136	Կարգավորիչ տափողակ	-
7. Կախոց		
137	Տրավերս	639500
138	Կրոնշտեյն	-
139	Ձախ կամ աջ հողակապ	-
140	Ձախ կամ աջ հողակապի փոշեթիկնոց	-
141	Անվակունդ	-
142	Անվակունդի խցուկ	-
143	Անվակունդի ներքին առանցքակալ	-
144	Անվակունդի արտաքին առանցքակալ	-
145	Հետևի անվակունդի ներքին առանցքակալ	-
146	Հետևի անվակունդի արտաքին առանցքակալ	-
147	Ձախ կամ աջ հողակապի խցուկ	-
148	Հարվածամեղմիչի թասակ	-
149	Զսպանակ	71980
150	Առջևի հարվածամեղմիչ	609790

151	Հարվածամեղմիչի փոշեթիկնոց	10940
152	Հարվածամեղմիչի վրան	-
153	Ներքևի լծակ	158670
154	Ներքևի լծակի վրան	55980
155	Վերևի լծակ	153100
156	Վերևի լծակի վրան	-
157	Գնդե հողակապ	-
158	Առջևի կայունարար	142930
159	Առջևի կայունարարի վրան	-
160	Առջևի կայունարարի առջևի վրան	-
161	Հետևի զսպանակ	-
162	Հետևի ցնցամեղմիչ	977050
163	Հետևի մետաղաձող (շտանգա)	-
164	Հետևի մետաղաձող (շտանգա) վրան	-
165	Հետևի անկյունագծային լծակ	74720
166	Անկյունագծային լծակի վրան	-
167	Զսպակ (ոեստորա)	-
168	Զսպակի վրան	-
169	Զսպակի միջադիր	-
170	Զսպակի բռնիչ	-
171	Աջ կամ ձախ ձգան	168920
172	Ծայրակալ	-
173	Ձգան մեջտեղի	-
174	Անվահեծ	241810
	8. Ղեկային մեխանիզմ	
175	Ղեկային կալուն	1079560
176	Ղեկային կալունի առանցքակալ	-
177	Ղեկային կալունի խաչուկ	-
178	Հիդրոուժեղարար	-
179	Հիդրոուժեղարարի փոկ	23550
180	Հիդրոուժեղարարի վերանորոգման կոմպլեկտ	-
181	Հիդրոուժեղարարի պոմպ	683590
182	Հիդրոուժեղարարի պոմպի վերանորոգման կոմպլեկտ	-
183	Ղեկային ձող	146690
184	Ղեկային ձողի ծայրակալ	-
185	Հիդրոուժեղարարի յուղ, 1 լիտր	14000
186	Ճոճանակ	-
187	Ճոճանակի վրան	-
	7.Արգելակային համակարգ	
188	Գլխ. գլան	192180
189	Գլխ. գլանի վերանորոգման կոմպլեկտ	-
190	Վակումային ուժեղարար	289300
191	Բանվ. գլան	-
192	Բանվ. գլանի վերանորոգման կոմպլեկտ	-
193	Արգելակային փոխրակ	-
194	Սոպպորտի ուղղորդիչ	101810
195	Սոպպորտի մոնժետ	12820

196	Առջևի արգելակային կոճղակների կոմպլեկտ	117370
197	Հետևի սկավառակային կոճղակների կոմպլեկտ	76040
198	հետևի թմբուկային կոճղակների կոմպլեկտ	-
199	Առջևի արգելակային սկավառակ	162240
200	Հետևի արգելակային սկավառակ	93940
201	Ձեռքի արգելակային ճուպան	-
202	ABS-ի տվիչ	55210
203	Արգելակային հեղուկ, DOT-3 - 800գրամ	-
204	Արգելակային հեղուկ, DOT-4 - 800գրամ	7000
205	Ձեռքի արգելակային ճուպան	-
	9. Էլեկտրասարքավորում	
206	Գններատոր	464010
207	Գններատորի դիողային կամրջակ	-
208	Գններատորի ռելե	67030
209	Գններատորի առանցքակալ	-
210	Ստարտեր	295960
211	Ստարտերի ռելե	-
212	Ստարտերի ածուխ	-
213	Բենդեքս	-
214	Ստարտերի կցորդիչ (ավտոմատ)	52150
215	Առջևի լապտեր	866150
216	Առջևի թարթիչ	-
217	Հետևի լապտեր	-
218	Հետևի թարթիչ	-
219	Արգելակային լապտեր	231050
220	Լամպ	-
221	Էլեկտրական անջատիչ	22050
222	Էլեկտրական տվիչ	-
223	Էլեկտրական չափիչ սարք	-
224	Բռնկման կողպեք	-
225	Էլեկտրալարերի գլխավոր խուրց	-
226	Էլեկտրալարերի երկրորդային խուրց	-
227	Վառոցքային լարերի խուրց	-
228	Վառոցքի մոմի ծայրակալ	-
229	Վազքաչափ	-
230	Վազքաչափի ճուպան	-
231	Արագաչափ	-
232	Ազդանշան	-
233	Ապակեվազիչ	-
234	Ապակեվազիչի շարժիչ	255950
235	Դռների կենտրոնական փական	-
236	Ազդանշանային համակարգ	-
237	Մագնիտոլա	-
238	Էլեկտրաամբարձիչ	-
239	Էլեկտրաամբարձիչի շարժիչ	-
240	Ներկ. լուծիչ, օժանդակ նյութեր գին 1դ/մ վերանորոգման համար	-
	Ընդամենը	29378600

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

հրավերով նախատեսված սահմանումն համառոտ	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	Ծառայության										Ընդամենը		
			դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2018թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	
1	50111130/1	Ավտոմեքենաների վերանորոգման ծառայություններ /4252/	1000000	1000000	1000000	1000000	1000000	1000000	1000000	1000000	1000000	1000000	1000000	1000000	1000000

* Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով:

Պ Ա Տ Վ Ի Ր Ա Տ ՈՒ

ՀՀ ԱԺ աշխատակազմ
 ք. Երևան, Մ. Բաղրամյան պող. 19
 ՀՎՀՀ 00008519
 ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
 Հ/Հ 900011020089
 ՀՀ ԱԺ աշխատակազմի ղեկավար -
 գլխավոր քարտուղար՝
 Արա Սաղաթեցյան



Կ Ա Տ Ա Ր Ո Ղ

«Եւրոմոթորս» ՓԲԸ
 ք. Երևան, Գր. Լուսավորիչ 7
 «Հայէկոնոմբանկ» ԲԲԸ
 Հ/Հ 163288054279
 ՀՎՀՀ 02628089
 Տնօրեն՝
 Զաբէր Ալմարզուբիի



Հավելված 3.1
« 15 » 03 2018թ. կնքված
ՀՀ ԱԺ ՄԱԾՁԲ-18/21 ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N
պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____ (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կատարողի անունը

(այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. _____-ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման
նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

Ծառայության		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

ազգանուն, անուն

ստորագրություն

Ընդունեց

հայտը նախագծած ներկայացուցիչ՝

ազգանուն, անուն

ստորագրություն